

քերը, զանազան եկեղեցական իրեր, ինչ որ իրենց հաճոյ կը թուի, ու թալանն առնելով կը վերադառնան իրենց երկիրը: Երբ հոն կը հասնին, աստուածային պատիժով մը ցաւ կ'իյնայ մարդոց եւ կենդանեաց մէջ: Այդ պարագային տեղի քիւրտերը կը նեղեն աւազակամբի անգամները, ըսելով թէ՛ երեւի վնաս մը հասցուցած էք հայ վանքերուն, որու պատճառաւ ցաւն ու պատուհաս մեր վրայ եկած են: Աւագահները ստիպուած կը խոստովանին իրենց արարքը. քիւրտերը անմիջապէս եկեղեցական իրերը իրենց հետ առած՝ կ'երթան Սեպուհ լեւան վանքերը, իրերը ետ կուտան, ներողութիւն կը խնդրեն, եւ... կը ստիպեն վանահայրերը, որպէսզի զիրենք օրհնեն. ու օրհնութիւնը առած՝ կը վերադառնան իրենց տեղերը:

Քիւրտերու վարժունքը Գարանազցին բացատրած է կրօնական հաւատալիքներով: Իմ կարծիքով կրօնական նախապաշարուած շատ քիչ դեր ունի այն ընթացքին մէջ, որ բռնած են քիւրտերը հանդէպ հայ վանքերուն. այդ քայլը պէտք է բացատրել բարեկամական յարաբերութիւններու գրգռմով: Եւ իրօք, քիւրտերը, ընդհանրապէս, դէպի հայ վանքերն ունեցեր են յարգանքի զգացում մը, որ կը շարունակուէր մինչեւ վերջին ժամանակները: Շատ մը վանքեր, նոյնիսկ իրենց համար ալ սրբատեղի եւ ուխտատեղի կը նկատուէին: Այդ յարգանքի մէջ եթէ կար կրօնական քաղաքավարութեան հարկադրանքը, առաւել նշանակութիւն մը ունէր նաեւ այն հանգամանքը, որ հայ վանքերն ու եկեղեցիները, իրենց ղեկավարներով, կը ներկայացնէին հայ ժողովրդի, այսպէս ըսենք, աշխրէքապետները: Ուրեմն յանդանքը ազդի ղեկավարութեան հանդէպ էր:

Վերի կարծիքին մէջ զիս աւելի կ'ամբապնդէ օտար հեղինակ մը եւս, Պիտոն տը Տուրնըֆօրը (Pitton de Tournafort) իր Voyage de Levant նշանաւոր գրքի երկրորդ հատորին մէջ, տալով շարք մը տեղեկութիւններ հայերու եւ քիւրտերու յարաբերութեան մասին: Տուրնըֆօրի ճամբորդութիւնը արեւելք կատարուած է 1702 թուին, այսինքն Գարանազցու ժամանակաշրջանէն մօտ վախճուն տարի յետոյ: Հեղինակի նկարագրութենէն կ'երեւ-

ւի որ նախորդ դարու անիշխանական վիճակը ամբողջովին վերջ գտած չէ 18-րդ դարու սկզբին: Տուրնըֆօր շարունակելով իր ճամբորդութիւնը Թուրքիոյ խորերը, անապահովութեան պատճառով կը միանայ էրզրումի փաշային, որ Տրապիզոնէն էրզրում կը դառնար, ու անոր ընկերացող սրահակներու շնորհիւ միայն ապահով կը հասնի էրզրում: Երբ զիտնականը կ'ուզէ էրզրումէն անցնիլ Եփրատի եղերքները բուսարանական ուսումնասիրութեան համար, փաշան պարզօրէն կը յայտնէ որ իր իշխանութիւնը քաղաքէն դուրս քիւրտերու վրայ չի տարածուիր, ու կը թելադրէ Տուրնըֆօրին զիմեյլ հայ վանահօր ու անոր բարեկամական աջակցութեամբ կատարել ճամբորդութիւնը քրտական շրջաններու մէջ, ուր հայ եկեղեցականները կը յարգուին:

Տուրնըֆօր կը նկարագրէ քիւրտերու սանձարձակութիւնները, մարդասպանութեան հակումը եւ մանաւանդ անոնց հակակրանքը հանդէպ թուրք մահմետականներու: Այս պայմաններու մէջ եւրոպացի ճամբորդը ստիպուած է նախազգուշական միջոցներ ձեռք առնել դուրսը վրայ չտալու համար: Ու կը նկարագրէ իր մեկնումը դէպի հայոց Կարմիր վանքը, որ էրզրումէն երեք ժամ հեռաւորութեան վրայ կը գտնուէր. — «Եպիսկոպոս վանահայրը որ կը նկատուի ամենէն զիտնական մարդը հայերուն մէջ: Անիկա՛ վանքը կը նստի: Այս որակումը շատ պէտք չէ տեսնել, նկատի առնելով որ Հայաստանի մէջ զիտութենէ հասկցող չկայ. բայց ինչպէս մեզ վստահացուցին, ան շատ մեծ ազդեցութիւն ունէր քրտերու վրայ»:

Տուրնըֆօր Կարմիր վանքի վանահօր հետ ճանապարհ կ'իյնայ դէպի Եփրատի ափունքները, ու ճանապարհին յաճախ կը զիմաւորուին աչքերը սրած քիւրտերու, որոնց միշտ կը զիմաւորէր վանահայրը, կը հանդարտեցնէր, ու ապա ճանապարհը կը շարունակէին:

Երբ անգամ մը վանահայրը սպաննացող քիւրտերու հետ երկար կը բանակցի, Տուրնըֆօր եւ իր ընկերը անհամբեր կը սպասեն եւ սրտադողի վայրկեաններ կ'ուենեան. — «Մենք քիչ մը ապահովուեցանք, երբ մեր հայ թարգմանը եկաւ մեզի ըսելու որ քիւրտերը վանահօր պանիր հայ մը տուին: Նոյն ժամանակ ձերու-